

ԱՐԵՎԵԼԻՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ

(20—30-ական քվականներ)

Լ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

20—30-ական թվականներին սովետահայ գրականության մեջ Արևելքի թեմատիկայի մարմնավորումը դարձավ ստեղծագործական կարևոր խնդիրներից մեկը: Երևույթն ունի իր բացատրությունը: Հայաստանը գտնվում էր արևելյան երկրների սահմանագծում, բնականաբար նրան հուզում էր հարևան ժողովուրդների ճակատագիրը: Արևելքը արդեն բոցկլտում էր, նոր ուժով ծավալվում էր սոցիալական-քաղաքական պայքարը իմպերիալիզմի գաղութարարական քաղաքականության դեմ: Սովետական երկիրը, այդ թվում Հայաստանը հետաքրքրության էր հետևում այդ պրոցեսին: Հայ դասական գրականությունը, իր հերթին, գեղեցիկ ավանդներ էր թողել, հսկայական փորձ ուներ, և այդ փորձն ու ավանդները իզուր չանցան: Խ. Արովյանի «Թուրքի աղ-չիկը», Բաֆու պարսկական պատկերները, «Հարմը», «Խաս-փուշը», Շիրվանզադեի «Ֆաթման ու Ասաղը», Վրթ. Փափազյանի մի շարք պատմվածքները և այլ հեղինակների գործեր հայրենական գրականության մնալուն արժեքներն են՝ արևելքի ժողովուրդների կյանքի արտացոլման առումով: Դասական գրականության փորձը փոխանցվեց սովետահայ գրականությանը:

«Աշխարհի մեջ մեզ վիճակվեց մի հայրենիք՝ հզոր, մեծաքանակ ժողովուրդների ճանապարհի վրա, աշխարհակալ պետությունների բախումների հանգույցի մեջ,— և այդ եղավ մեր ճակատագիրը, և շատ դաժան եղավ այդ ճակատագիրը»¹,— գրել է Ավ. Իսահակյանը: Եվ շարունակած հայ ժողովուրդը, որին ճակատագիրն ասես բաժին էր հանել միայն տառապանք ու մաքառում, վերջապես թոթափեց սոցիալական ու քաղաքական ծանր լուծը և սկսեց կառուցել նոր կյանք՝ իր էությանը հասուկ հավատով ու եռանդով: «Այդ ապագային կորիզը արդեն ունի՞ք այժմյան փորձի կենսախաշտ Արարատյան Հայաստանին մեջ, ուր ցեղը իր մտավոր ու նյութական տունը սկսած է վերջինել՝ իր սեփական ճիգով ու զմայլելի համառությամբ, եռանդով ու կորովով»²,— 1925 թ. գրում է Արշակ Չոպանյանը:

Գրականությունը, ինչպես երբեք, արձագանքեց հասարակական կյանքին, և ասպարեզ եկան սոցիալիստական աշխատանքի, նոր մարդու հոգեբանության ձևավորման և այլ թեմաներ: Սոցիալիզմի իրականացումը դարձավ նորաստեղծ գրականության հիմնական մտահոգության առարկան:

Սոցիալիստական կյանքի նկարագրության հետ զուգընթաց հայ հեղինակներին հետաքրքրում էին միջազգային հեղափոխական շարժման էությունը, դարավոր նիրհից արթնացող Արևելքը: Այս երևույթը միանգամայն օրինաշափ էր. Արևելքը վերջապես բարձրացրել էր ազատության դրոշը, «...Տրոլված, միջնադարյան անշարժության մեջ վայրենացած բնակչության հարյուր միլիոններն արթնացել են նոր կյանքի, նոր պայքարի՝ հանուն մարդկային տարրական իրավունքների, հանուն դեմոկրատիայի» (Լենին), և ազատագրված Հայաստանը չէր կարող չարձագանքել, անտարբեր նայել Արևելքի ճակատագրին:

Մյուս կողմից՝ հայ հեղինակների նպատակն էր նոր հասարակարգի՝ սովետական իշխանության հաստատման փուլում հակադրության մեջ դնել հին ու նոր Արևելքը՝ ավելի ցայտուն դարձնելու նոր աշխարհի վերածնունդը:

Կար մի հանգամանք ևս. հայ իրականության մեջ արդեն ապրում և ստեղծագործում էին այնպիսի գրողներ, որոնք նոր էին տեղափոխվել Սովետական Հայաստան (Վ. Թոթովենց, Զ.

¹ Ավ. Իսահակյան, Երկերի ժող., հ. 6, Եր., 1977, էջ 179:

² Ա. Չոպանյան, Նամակներ, Եր., 1980, էջ 155:

Եսայան, Գ. Սարյան), և նրանք թե՛ ինքնակենսագրական ժանրի երկերում, որ 20—30-ական թթ. շափազանց ինքնատիպ լուծումներ ունեցավ, թե՛ գեղարվեստական այլ ստեղծագործություններում պատկերում էին իրենց ծանոթ Արևելքը, ընդգծելով Հայաստանի պատմական նոր տեղաշարժերը: Նշված հանգամանքները սովետահայ գրականության մեջ Արևելքի թեմային հաղորդեցին արդիական ու հասարակական հնչելուություն:

Անձնական մտտիվներից մինչև հասարակական հուզող խնդիրները,— այս ամբողջ թեմատիկ շղթան իր առաջին արձագանքը գտնում է պոեզիայում: Պոեզիան առավել զգայուն է կյանքի երևույթների հանդեպ, արագ է հասնում ընթերցողին, հարկ եղած դեպքում հրապարաստական կրթով ու պաթոսով շիկացնում է հասարակական-քաղաքական մթնոլորտը: Արևելքի թեմային արձագանքեցին Ե. Չարենցը, Ա. Վշտունին, Գ. Սարյանը:

Չարենցի նման հզոր անհատականությունը չէր կարող անտարբեր նայել այն փաստին, որ «դարեր, դարեր հեծում է ամբողջ մի երկիր»: Եվ միանգամայն բնական է, որ Արևելքի թեման պետք է արձագանքեր նրա հոգում, տար իր արդյունքը՝ շունդալի ու իրական:

Պարզում է ձեռքերն առաջ
Հոգիս, որպես որբ տղա.—
Ուզում է—արևկեզ հաբավ,
Ուզում է արևի ծննդան...

Չարենցի ներքնաշխարհին հատուկ արևի՝ մի կողմից որպես լուսավոր, եթերային եզերքների, մյուս կողմից՝ ներքին կրակի, ոգևորության սիմվոլի ընկալումները, որպես բազմաթիվ գործերի սկիզբ, նաև խորհրդանշի՝ հայտնի դարձրին Արևելքը: Վերոհիշյալ որակները նախ իրենց հեռավոր արձագանքը գտան դեռևս «Սոմա» պոեմում, և ապա ծրագրային նշանակությամբ երկվացին տարբեր գործերում, օրինակ դիստիքոսներում («Ձիրքը քեզ Իրանը տվեց...»), «Չարենց-նամեում» արդեն որպես ինքնաբերորոշում:

Իմ հոգում արևն Իրանի,
Իրանի արևն իմ հոգում:

Հեղափոխության ալիքը ցնցում է Արևելքի թմրած աշխատավորին: Չարենցը ստեղծում է ճանաչողական խոշոր արժեք ունեցող պատկերներ, հասնելով գեղարվեստական բարձր որակի: «Սոմամբոլ» պոեմում համոզիչ ու վառ գույներով են պատկերված թշվառության մեջ խեղդվող թուրք ժողովրդի անլուր տառապանքը և ռեստորաններում ծախու մարմիններից շոգ շշուկների հետ բարձրացող հեշտանքը: Սոմամբոլը անվանելով «միջազգային պոեմիկ»՝ բանաստեղծը բացում է հրեշավոր մթնոլորտը, սարսափազդու բարքերն ու կենցաղը, նաև քաղաքական մեղավոր դեմքը:

Արևելյան կյանքին քաջ ծանոթ լինելով՝ Չարենցը իր հեղափոխական գրչին հատուկ պաթոսով ստեղծեց հրաշալի հատվածներ և Արևելյան ժողովուրդների ճակատագիրն ու հետագա ուղին քննելիս պահպանեց լավատեսությունը: Նա համոզված էր, որ կգա նավաստի Ալին (այս կերպարը ստանում է խորհրդանշանական իմաստ և հանդիպում մի շարք գործերում), «դեռ կանցնի այս ցուփ Սոմամբոլով, և հետո

Կենձն ես հուճը ձեռք բերի,
Կհարքեի,
Որ տեղում ցանք նորը:

1922—1929 թթ. «Խորհրդային Հայաստան» թերթում լույս են տեսնում Սեյիդ էլ-Նուրի բանաստեղծությունները, որոշ ժամանակ անց Ազատ Վշտունին հայտարարում է, որ Սեյիդ էլ-Նուրը ինքն է: Թեման Արևելքն է, ոչ որպես «սուկու ու փեթիներին» երկիր, այլ երկիր, ուր ժողովուրդը արթնացել է դարավոր նիրհից, ուր բարձրացել է վրեժի, ատելության ալիքը, ծավալվում է պայքար տիրողների դեմ:

Հայաստանի խորհրդայնացումից մեկ տարի անց Ա. Վշտունին մեկնում է Իրան, Իրաք՝ հայրենադարձությունը կազմակերպելու համար: Արևելքը ծանոթ էր նրան (1908—1911 թթ. Վշտունին սովորել է Պոլսի Կենտրոնական վարժարանում), այս ճանապարհորդությունը խտացնում է սպավորությունները, առիթ դառնում նոր ջերմությունը երգելու Արևելքը, ավելի ստույգ՝ հեղինակը հեղափոխական երկրից ողջունում է «հին աշխարհի, հին օրերի փառք հերքող» Արևելքին: Վշտունու արևելյան շարքը ավելի գաղափարական ուղղվածություն ունի: Արևելքի ժողովուրդներին պետք է զարեացող ու հրեպնե՛ս երգ, որովհետև նրանք «թախծի ու վշտի երգեր» շատ ունեն,— սա է Վշտունու հավատամքը: «Արևելքի փողոցում» (1923), «Դերվիշ» (1921), «Ուլաթը»

(1921), «Սրկու սեր» (1921), «Պոեմ շինական» (1924), «Ռամ Ռոյ» (1725),— այս բոլոր գործերում բանաստեղծը Արևելքը երգում է առանձնահատուկ պաթոսով, ձգտելով ներկայացնել արևալատ երկիրը, նրա շունչը, Հոկտեմբերյան հեղափոխության արձագանքը:

Այլ է Գեղամ Սարյանի մոտեցումը, նա Արևելքը ներկայացնում է նոր կողմերով՝ քնարական մեղմ Նշերանգով: Գ. Սարյանը ծնվել է Թավրիզում: Այստեղ բանաստեղծը ծանոթանում է թշվառությանը, դառնում անհամար անարդարությունների ականատես: Գ. Սարյանը մեղմ, հանդարտ բնավորություն է, սակայն արտաքին մեղմության ետևում նրա անհանդուրժող, անխառն հոգին է, ժողովրդի ճակատագրին, մարդու բարոյական նկարագրին երեք անտարբեր չնայող տնհատը: Նա ստեղծեց անաղմուկ, բայց ժամանակի շունչը կրող պոեզիա: Գ. Սարյանի արևելյան պատմվածքը առաջին գործը «Գյուլխանդան» է, ապա երկու տարի անց գրում է «Տաթալի» պատմվածքը: Այս գործերում հերոսների ճակատագրերը նույնն են՝ նրանց կյանքը արմատապես փոխվում է սովետական իրականության օրոք: Այս ստեղծագործությունները մասամբ սխեմատիկ բնույթ ունեն, սակայն նախապատրաստում են, թեմայի հիմքը դնում: Եվ ծնվում են «Գյուլխանրա», «Իրանի», «Թառգանի մորմոքը» և «Շահն ու Մեջունը» պոեմները: «Խանի ու թաղիի» երկրի աշխատավոր վերջապես սթափվել է թմրած վիճակից, նա դժգոհ է և այլևս չի թաքցնում իր դժգոհությունը: Պոեմները պարսկական կյանքից են. խաների մասին, հարեմներում փակված տխուր գեղեցկուհիների, դաժան իրականության մեջ շղթաված սիրո մասին, որոնք թարմ շունչ բերեցին հայրենական պոեզիա, աչքի ընկան քնարականությանը, թախծոտ մեղեդայնությանը: «Արևելաաբիություն» մեղադրանքը շնեղեց ժամանակի հետ միշտ համընթաց քայլող բանաստեղծին, որովհետև նա անկարող էր հարազատ հողի նոր կյանքը տեսնելով, շնկատել հեծեծող Արևելքը:

Արևելքի թեմային առաջինը սովետահայ արձակագրության մեջ անդրադարձել է Մ. Արազին: Իր ողջ ստեղծագործական կյանքում իր գրչին հատուկ մեղմ տոնով նա նկարագրեց, Ստ. Զորյանի խոսքով սասձ՝ «Քաջուն, կամացուկ վշտի աշխարհը», մարդկանց, որոնք չհասկանալով թե ինչու է կյանքը «ծանրացել, բանտ դարձել», վշտից ու կարիքից լուռ նվում են, հոգու խորքում փայփայելով աղոտ գծագրված մի հույս: հատկանիշ, որը շատ է բնորոշ ողջ հայ գրականությանը: «Ապագան թվում էր մի լուսեղեն աշխարհ, որին դիմում էր ոգեշնչված եռանդով»:

Արևելյան մոտիվներով Արազին ունի երեք պատմվածք՝ «Խալիլայի երգը» (1922), «Արծաթի տակ» (1924), «Գուշմանի երգը» (1925), որոնք փոքր պատկերներ են արևելյան կյանքից, որտեղ մարդիկ սգարի ճիրաններից» հալածված, գիտեն, որ ծովի այն կողմը բանվորների իշխանությունն է և «աչքը ջուր կտրած սպասում են»: Նրանց ձայնը «մղկտում է, այլով, պատերը կոծում, բողբոջում և մնում անդարման, ինչպես ամեն ինչ արևելյան էն քաղաքում»: Այս պատմվածքներում շկա գրողին հատուկ քնարական, ոռոմանտիկական շեշտը, իշխում է ռեալիզմը: Տալով կյանքի իրական նկարագրությունը, հեղինակը նաև ուրվագծում է այն հակասություններ, որոնք կործանում են անհատին: Մ. Արազու ուժը նրանում է, որ առաջին հայացքից աննկատ դեպքերի, դեմքերի նկարագրությունը գծում է տպավորիչ, բացահայտում կյանքի տխուր պահերի արմատները, և այդ ամենը մի քանի տողով, փոքր ղրվագով, մի թախծոտ տրամադրությամբ:

Զարթնող Արևելքին է նվիրված Գ. Դեմիրճյանի «Զարգյահը» (1925) պատմվածքը, որին հեղինակը տվել է «պոեմ» ենթավերնագիրը: Թեհրանից քարավանով վերադառնում է խանը՝ ծեր ու «կիսամրափ», քարավանի առջևում նստն է՝ պարագլուխ ուղտը՝ «հպարտագլուխ», բոժոժներով զարդարված, վրան մատաղահաս Նինգը, որին խել են հորից պարտքի դիմաց. և ստեղծվում է վառ արևելյան պատկեր, ծանոթ ու հին: Փարավանի ետևից քայլող Ռիզանը՝ գնալով «դեպի լուսավոր մի օր, թերևս կախաղան»՝ սրտում հեղափոխական ընկերների պարտության վիշտը, հարազատ աղջկա պատկերը՝ «Մի տոշոր աղլիկ, գույնը լիմոնի, քաղհան է անում մուքաղարի բամբակի արտում: Տասնամյա աղջկա աչքերը խոշոր են, նա աչքեր է միայն՝ մնացածը ազալի կմախք: Տենդը տղրուկի պես խմել է նրա հյութերը, թողել է աչքերն ու թախիծը: Այդ աչքերը կարոտով են նայում կյանքին...»: Սա ևս արևելյան պատկեր է, ծանոթ ու հին, սակայն որին հետևում է շարգյահը՝ որ սգորհի երգ էր, մարտական քարավանի, որ ոտ է առնում, շարժվում սպառնազին ու դիլվելով զարկուն՝ զանգ-զրանգ: Բացվող լուսարացի հետ բացվում է նաև «ուղտի վրժեր»։ պատմվածքը դառնում է սիմվոլ, հայտնի է դառնում ժողովրդի համբերության սահմանը, անթարթ հայացքով դեպի կախաղան գնացող Ռիզանի պայքարը եվ հեղինակը քնարական երանգով ստեղծում է Արևելքը բնութագրող մի հրաշալի պատկեր, նաև սոցիալական շերտավորումը, սոցիալական տեղաշարժերը, հավատում նրա հաղթական ապագային:

1929 թ. Դեմիրճյանը գրում է «Ռաշիդը» վիպակը, որը պատկերում է 20-ական թթ. ադրբեջանական գյուղը, «արյան վրժի, դավերի, ատելության ու նյութական հաշիվների անթիվ թելերով խճճված հին գյուղը», որը դարձել էր հակասությունների զղակ, հին ու նոր ուժերի բախման

կենտրոն: 1930 թ. գրված «Նիզար» վիպակը նկարագրում է անցյալում ճնշված անհատի զարգացումը, ազատագրումը նոր հասարակարգի պայմաններում, կնոջ աղատագրման պրոբլեմը, որը հաստատվում է առանձնակի դժվարություններով:

Այս երկու գործերն էլ Արևելքի թեմային առնչվում են այնքանով, որ հերոսները հետամնաց Արևելքի զավակներ են, որոնք հաստատում են իրենց նոր կյանքում, մասնակցում սովետականացման գործին: Ժամանակին Դեմիրճյանի այս գործերը գնահատել է Ի. Զարենցը. «Այս երկու գործերն էլ միանգամայն ազգային են ձևով, որովհետև տալիս են տվյալ բովանդակության, տվյալ միջավայրի ռեալիստական պատկերը, ազգային կոնկրետ պայմանները, հոգեբանությունը և այլն»³:

Վ. Քոթովենցի ստեղծագործություններում առաջնայինը մարդկային հոգեբանությունն է՝ իր անհամար ծայրերով, որ շերտ-շերտ բացվում է տաղանդավոր գրչի տակ՝ բացահայտելով տարբեր բնավորություններ, ամենատարբեր ճակատագրերով: Քոթովենցը այն հեղինակներից է, որոնք «ժլատ են» նկարագրություններով, բայց հրաշալի ու լիացնող՝ նկարագրով:

Ստեղծելով տվյալ հատվածի սոցիալ-պատմական նկարագիրը, հեղինակը ընտրում է իրապատում հերոսներ, որոնք ողբերգություն են ապրում սեփական երազների ու իրականության անհամատեղելիությունը շոշափելով: Մի հանգամանք, որը բավական քնորոշ է Քոթովենցի նկարագրին. հեղինակի անընդհատ ներկայությունը, անկեղծ միջամտությունը: Արձակագիրը անհանդուրժող է ամեն շարի, ժխտում է հասարակության վերնախավի օրենքները և այն համոզմունքն ունի, թե «կյանքն է, որ փոխում է արևը, սոցիալական միջավայրն է, որ արևը ավելի կամ նվազ փայլուն է դարձնում» («Արարական բալլադ»):

Արևելյան թեմայով գրված գործերից ուշագրավ են «Աղավնիները» և «Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքները:

«Աղավնիներ» պատմվածքը արտաքին-կենցաղային սովորույթների նկարագրության հետ մեկտեղ պարունակում է նաև սոցիալական խնդիրներ: Զանազան անիմաստ սովորույթներ աստիճանաբար արմատանում են, ինչ-որ հրաշագործ ուժով պահպանում ազդեցությունը հասարակության վրա՝ կործանելով հազարավոր սրտեր: Արևելյան քաղաքում «աղվընիկ խաղցնողը» դատապարտված էր մեկընդմիջտ, այդ անմեղ աղավնիները դառնում էին դժբախտության, մահվան խորհրդանիշ: «Աղվընիկ խաղցնող» Ակոյի աղջիկ լիլոյի և Հաջի Քումաս աղայի տղա Արայի սերը ցնցում է բոլորին, սարսափի ու պարսավանքի առիթ դառնում, որը միայն հետամնաց սովորույթի ուժը չէր, այլ սոցիալական ավելի բուրջ պատճառներից, հասարակական հակասություններից բխող դրամա: Իսկ աղավնիները խաղաղ թևում էին երկնքում, բացարձակ անմասն ու անտեղյակ մարդկային դաժանությանն ու տառապանքին:

Ցուրթրինակ գեղեցկություն է «Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքը (1934): Առերևույթ պարզության ներկայացնելով արհեստավորի մի ընտանիք, հարողության կերտելով միամիտ, առօրյա հոգսերով ապրող մարդկանց տիպերը, հեղինակը հասնում է խոր ընդհանրացման: Քորվանա Քորոն և փալանճի Գրիգորը՝ խնամելով որը Քորիկին՝ երջանիկ են: Նուրբ հումորով են համեմված նրանց կերպարները, անփույթ, մեղմ հումորով: Հետաքրքրական է Քորիկի կերպարը իր լուռ, հարմարվող էությունը: Երջապատի դիրքը, արագորեն ծավալվող «գազրիքի բամբասանքը» շեն ազդում, նա երջանիկ է իր Անժելի հետ և ի պատասխան համընդհանուր ազմուկի ի ցույց է հանում շրջապատի այլանդակությունը: Իսկ Անժելը՝ կյանքի հարվածներից տրորված, բայց հոգու մաքրությունը պահպանած «կապույտ, նվազկուն աչքերով» աղջիկը երջանիկ է այդ «կոպիտ ոսկորներով մարդու» հետ, երախտապարտ նրան:

20-ական թթ. Արևելքը նաև հայի հայրենիքն էր: Այս իմաստով հայ հեղինակները ժանրային ու թեմատիկ որոնումներ էին կատարում: Հենց ինքնակենսագրական վեպի մի շարք սկզբունքներ կապվում են թեմայի յուրովի արտացոլման հետ:

Մանկական հիշողությունների թեմայով հայ գրականության մեջ գրվել են բազմաթիվ գործեր, սակայն Վ. Քոթովենցի «կյանքը հին հովմեական ճանապարհի վրա» ստեղծագործությունը (1930) ինքնատիպ երևույթ է:

«Մայրս գնում է գոմ՝ կովը կթելու:

Գնում է ու երկար ժամանակ չի վերադառնում:

— Քա, աղջի, հարսն ի՞նչ եղավ, — հանկարծ բացականչում է հորաթույրս, — գոմ գնաց ու չեկավ:

Վազում են, տեսնում մորս՝ կովի մոտ նստած, գրկում՝ մի կապուտաշյա երեխա:

Այդ երեխան ես էի»:

³ Ի. Զարենց, Գրականության մասին, Եր., 1957, էջ 137:

Հուշը բացում է մի ամբողջ աշխարհ: Արտաքին քնարականութիւն, մեղմութիւն, ցայտուն բանաստեղծականութիւն հետ կա և անհուն քնքշանք դեպի անցյալը, ծնողները, հարազատները, և ներողամտութիւն՝ դեպի մարդկային թուլութիւնները, հնացած սովորութիւնները, և միաժամանակ, անսահման ցավ իր ժողովրդի արյունոտ ճակատագրի համար: Եվ հեղինակի քնքշանքն էլ, վիշտն էլ մեղմութիւն, շերմութիւն են պարունակում:

Մեկը մյուսի ետեկից անցյալի պատկերներ են, սիրելի հիշողութիւններ: Առանձին հատվածներ թողնում են արձակ բանաստեղծութիւն տպավորութիւն, քնարական ընդմիջումներն ընդգծում են սուբյեկտիվ մոտեցումը, գրվածքին հաղորդում հուզական շունչ. «...Մայրս ծպտում է մեր կապույտ լեռներից բարձրացող արևի միջից, տեսնում եմ նրա ծամերը արևի շողերին խառնված և լսում եմ նրա շողերի ձայնը...»

Արևը ինքը մայր է խարտոյալ աչքերով և ոսկյա մազերով:

Սակայն այս մեղմ երանգները չեն զրկում երկը իրապատում լինելուց: «Կապույտաշյա» մանկութիւն անսովոր հուշերի կողքին վառ գծագրվում են սոցիալական հակասութիւնները, հակադիր ուժերի առկայութիւնը, ուժեղի և թուլի հավերժական բախումը և հայի անուրախ ճակատագիրը Արևելքում:

Մանկական օրերի «հայ և թուրք» խաղը ասես սիմվոլիկ նշանակութիւն ունի, որը «շարունակվեց մինչև իմ պերիալիստական պատերազմը: Այդ պատերազմում խաղացվեց նույն խաղը, միայն այն տարբերությամբ, որ այս անգամ կողմերն իսկական հայեր ու թուրքեր էին, խաղում էին լուրջ և իրական հողի վրա, անսահման ատելութամբ բոցավառված»:

Միաձուլել մանկական վերհուշը քնարական խորհրդածութիւններին, միաժամանակ ցուցաբերելով կյանքին փիլիսոփայական մոտեցում, միայն տաղանդավոր գրիչը կարող է ստեղծել գույներին այսպիսի բազմազանութիւն, լիախտելով գեղարվեստի սահմանները:

Թոթովենցի «Կյանքը...» ֆրագմենտների ձևով մի ողջ մարդկային կյանք է՝ իր լավ ու վատ օրերով, ծիծաղոտ ու արտասովառան աչքերով: Դա լիովին ինքնատիպ երկ է, որի առանձին մասերը ամբողջական մասերի տեսք ունեն, միաժամանակ միահնչուված են, նախորդում ու հաջորդում են միմյանց՝ ներքին համաձայնությամբ: Վ. Բելինսկին Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսը» վեպի մասին գրել է. «...Ո՛րն է լիակատարութիւն պատճառը, դա վեպում արտահայտված մտքի միասնութիւն մեջ է, որից առաջ է եկել ամբողջի հետ մասերի այդ ներդաշնակ համապատասխանութիւնը, բոլոր դեմքերի, դեպքերի այդ խիստ համաչափ բաշխումը, վերջապես այդ ավարտվածութիւնը, լիակատարութիւնը, ներփակվածութիւնը»⁴: Թերևս սխալված չենք լինի այս գնահատականը վերագրելու Թոթովենցի «Կյանքը...» ստեղծագործութիւնը:

Ժամանակին Թոթովենցը մեղադրվել է անցյալը իդեալականացնելու մեջ: Եթե, իհարկե, հին կյանքը իր կենցաղով, հարազատներին ու հին ծանոթներին այդքան նրբորեն գծագրելը դա է նշանակում: Պարզապես հեղինակի պատմելու ոճը, հանդարտ հնչերագրը, երբեմն նկատելի հումորով ներծծված պատկերները ստեղծում են այնքան հրաշալի տպավորութիւն, որն ըստ երեւոյթի, ստեղծում է անցյալի իդեալականացման պատրասք, հետաքարք և անհիմն մեղադրանք:

«Կյանքը հին հողմմեական ճանապարհի վրա» վիպակը մի ողջ ժողովրդի պատմութիւն է, հայութիան արեւմտահայ հատվածի կենցաղն ու ճակատագիրը: «Սերը անմահ է, ատելութիւնը մահանում է ամեն րոպե», — Վ. Սարոյանի այս համոզմունքը համապատասխանում է Վ. Թոթովենցի ողջ ստեղծագործութիւնը: Նրա գործերում հանդես են գալիս բազմաթիվ կերպարներ, շոշափվում են սոցիալական պորբիւններ, գծագրված է հայի անժպիտ բախտը, բայց գրանք զարմանալիորեն պարունակում են անսահման քնարականութիւն, բարութիւն: Անգամ այն գործերում, որտեղ անարդարութիւնը ավերվածութիւններ է թողնում, հեղինակի շերմ շունչը կարծես ասում է. «Կյանքը տխուր չէ, բայց տխուր ժամեր ունի» (Իրոնն Իրլան):

Անցյալ դարի վերջին, սուլթանական ռեակցիայի ծանր պայմաններում ստեղծվում է արեւմտահայ ռեալիստական գրականութիւնը, որին ակտիվ մասնակցում է Զապել Եսայանը: Վաղ շրջանի իր գործերում Զ. Եսայանը համարում է տառապող հոգիներին, նկարագրելով մարդկային հոգեբանութիւնը, նրա ցավալի ճակատագիրը, դառնանում է, բայց չի բավարարվում տեսնելով միայն, այլ կարողանում է որոնել ու տեսնել երևույթի սոցիալական արմատները, զրկախտութիւն տարածման բուն պատճառները: Եվ Եսայանի հերոսները «չեն տառապում» լավատեսութիւնով: Հերոսների, միջավայրի, հաճախ նաև առանձին պատկերների նկարագրութիւն միջոցով գրողը հասնում է սոցիալական ընդհանրացումներին:

Տեղափոխվելով Սովետական Հայաստան՝ Զ. Եսայանը շարունակում է իր գրական-հասարակական եռանդուն գործունեութիւնը, անհուն սիրով, հավատարմութիւնով մասնակցում հա-

⁴ Վ. Գ. Բելինսկի, Ընտիր երկեր, Ե., 1948, էջ 98:

րազատ երկրի վերականգնմանը: 30-ական թթ. իրար ետևից լույս են տեսնում «Կրակե շապիկ» (1934), «Միլիտարի պարտեզները» (1935), իսկ 1936 թվին մամուլում հայտնվում են «Բարպա Խաչիկ» վեպից հատվածներ:

«Կրակե շապիկը» ներկայացնում է մի ընտանիքի պատմություն, որը միջոց է մի ողջ դասակարգի սոցիալական պատկերը բացահայտելու, դասակարգ, որի մոտ շրջած էր շքավորությունը, ինչպես մշտատե պատուհաս: Հերոսները տառապում են առօրյա հոգսերով, կյանքի շարհարձակումները մարդուն դարձնում են դաժան, խարխլում նրա իրական բնութագիրը, դարձնում մարած աչքերով յուրօրինակ մեքենաներ: Սակայն սոցիալական հակասությունները ծնում են նաև տատանումներ հոգեբանության մեջ, սկիզբ դնում ներքին հակասություններ:

«Միլիտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպ է, որտեղ երևում է սուլթանական իրականության ամբողջական պատկերը: Դեռևս 20-ական թթ. Ծալանը մամուլում արել էր որոշ նախնական փորձեր կենսագրական նյութի առումով, ինչպես «Մասնկության հիշողությունները» և «Հակոբ մորեղայր» պատկերները:

Անցյալը վերապրելը բնավ էլ իրական կյանքից փախուստ չէր, անցյալի իդեալականացում չէր, ինչում ժամանակին մեղադրվել են Ծալանը, Քոթոլկենցը, Բակունցը... Նոր թեմատիկային դիմելու համար ժամանակ է պետք, հավատացնում էր Ծալանը, արժեքավոր գործ ստեղծելու համար անհրաժեշտ է բավարար իմացություն նոր կյանքի, նոր ապրելակերպի, իսկ մինչ այդ ապրել է պետք այդ կյանքով, այն սեփականը դարձնելու միտումով:

«Միլիտարի պարտեզները» մանկության օրերի, պլուսական կյանքի բազմակողմանի արտահայտությունն է, «գեշ ժամանակների» նկարագրությունը. «...կինները առհասարակ դուրս չէին ելներ տունեն, իսկ տղամարդիկ ամեն առավոտ գործի երթալու համար, դրանք սեմին կանգ կառնեին, կխաշակներին և տնեցիներու հետ «հելալամիշ» կըլլային, որովհետև վստահ չէին, որ պիտի վերադառնային իրիկունը: Քանի, քանի անգամներ, Ստամբուլի փողոցներու մեջ, ենիչերի մը իր յաթաղանի սրտիցները փորձելու համար թոցուցած էր քրիստոնյայի մը գուլբը»:

Սակայն մի հատկանիշ, որ բնութագրական է Ծալանի համար, դարձյալ իշխում է վեպում. ժամանակի «գեշությունը» դառնացնում է նրա հերոսներին, բայց չի շարացնում, չի աղտոտում նրանց էությունը. «Աղջիկս, չկա գեշ ժողովուրդ այս աշխարհիս վրա: Կան գեշ մարդիկ և լավ մարդիկ», — ասում է հերոսուհին:

«Բարպա Խաչիկ» վեպը ամբողջապես մշակված չէ, լույս է տեսել մամուլում: Այստեղ ներկայացված է սուլթանական տիրապետության ժամանակահատվածը: «Երկիրը, ուր թուրք բնակչության մեծ մասը՝ կորված հողից ու աշխատանքից, լրացնում էր առասպելական շափերի հասնող պաշտոնեության, ոստիկանության և գործի շարքերը՝ իր լուծը այլազգիների վրա պահելու նպատակով, դարձել էր անասելի պատիժ և, բնականաբար, գոյություն կարող էր ունենալ միայն ավազակային եղանակով»:⁵ Սանր կյանքը, սուլթանական ճնշումը, անվերջ հալածանքները, ճշացող անօրինականությունները աստիճանաբար ստեղծում են գաղափարական խմորումներ: «Բարպան կզգար, որ ինքը և Զարեհը անհայտ թշնամիներ են, և թե օր մը, գալիք օրերու մեջ օր մը, ինքը և իրենները պիտի հաղթին ըլուր Զարեհներուն»: Արձակագրուհին իր հերոսներին տանում է իր անցած ճանապարհով՝ բացահայտելով դասակարգային-սոցիալական հակասությունները, ողջունելով բանվորական ակտիվացող շարժումները, անհատների գաղափարական զարգացումը: Վեպի կենտրոնական հերոսները, հուսահատված Պոլսի իրականությունից, ձգտում են Եվրոպա, խույս տալու համար աղաղակող անարդարություններից: «Այնտեղ, քաղաքակիրթ Եվրոպայի մեջ, չի կային ոչ ոստիկաններու բրտությունները, ոչ կաշտակեր պաշտոնյաներու անպատկառությունը, որուն մասին կլենր ամեն օր, ոչ անարդարություն, որուն զոհ կերթային աշխատող, ապրող մարդիկ...»: Եվ Միհրանին թվում էր, թե այդ ամենը հատուկ է միայն իրենց երկրին: Այդ մտածություններն են ստիպում թողնել Պոլսը: Քաղաքակիրթ Եվրոպայում, սակայն, նրանք համոզվում են, որ աշխատավորը այստեղ ևս ճնշված է, իրավազուրկ: Կրկին անարդարությունը բախվելով՝ Ծալանի հերոսները սկսում են փայտայն սովետների երկիր մեկնելու գաղափարը:

Եվ այսպես, վեպի գործող անձինք Պոլսում են, այս ֓արիզում, որտեղից մեկնում են Սովետական Հայաստան: Նրանց ճակատագիրը և՛ սեփական կենսագրությունն է, և՛ թերահավատ մոտեցում «Ազատություն, եղբայրություն, հավասարություն» բուրժուական լոզունգի հանդեպ, և՛ յուրովի ագիտացիա հարազատ փոքր դառնալու:

Նշվեց, որ «Բարպա Խաչիկ» վեպը անմշակ է. Պոլսի հատվածը առավել հաջողված է, իրապատում: Վեպի մյուս հատվածը համեմատաբար թույլ է, սխեմատիզմի հակումներով:

Վեպն ունի բազմաթիվ հերոսներ, որոնք տպավորվող են, խորապես մարդկային: Հաջողված

⁵ Հր. Քամրազյան, Պոեզիան պատմության քառուղիներում, Եր., 1971, էջ 97:

են երկրորդական կերպարները. ընդամենը մի քանի շարիխներով հեղինակը ստեղծում է որոշակի արտահայտված կերպար, ինչպես օրինակ Իպրաքսե հորաքույրը, մադամ Լենը, Արտակը: Վեպի թերութունները բացատրվում են նրա ծրագրային ընտյթով: Թերևս վերամշակելուց հետո կստեղծվեր կատարյալ վեպ մի ողջ ժողովրդի ճակատագրի մասին:

Դրամատուրգիայի ժանրում 20—30-ական թվականներին ուրույն տեղ ունեւ պատմական-հեղափոխական թեմատիկան: Պատկերելով ժողովրդի հեղափոխական պայքարը, քաղաքացիական կռիվները, հայ հեղինակները շոշափում էին նաև Արեւելի ազատագրման թեման: Հատկանշական է Սոս. Բաղդասարյանի «Արյունոտ անապատ» պիեսը, (1929): Այն նկարագրում է ֆրանսիական իմպերիալիզմի դեմ արար ժողովրդի պայքարը: «Արթնացիր, Մարտկո, այսօր խանգարվում է քո խորհրդավոր լուսթյունը»,— ասում է պիեսի հերոսներից մեկը: Ստեղծագործության հիմքում կորացած ժողովրդի ըմբոստացումն է, նաև ֆրանսիական կառավարության քննադատութունը. «Ազատութուն, հավասարություն, եղբայրություն» բառերի տակ թաքնված են «զազրելի ոճիրներ»: Պիեսը գրված է «սեղմ» ոճով, հապճեպ, առանց բարդ հոգեբանական պահերի, հանգամանք, որ նվազեցնում է ստեղծագործության գեղարվեստական արժեքը:

1924 թ. լույս է տեսնում Մկրտիչ Զանանի «Զոհեր» պատմվածքը, Պոլսի կյանքից մի դրվագ, ուր գծագրվում է աշխատավոր դասի կյանքը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի հեղինակի «Եհնամե» պիեսը (1934): Այստեղ «պատմական ֆոնը լուկ գեղարվեստական միջոց է արեւելյան երկրների սոցիալ-քաղաքական և ժամանակակից մի շարք հարցերի շուրջ հրապարակով մտածելու»: Դեպքերը կատարվում են Իրանում, XVIII դարում: Նկարագրված է ժողովրդի ընդվզումը թագավորի դեմ, այն գաղափարն է արտահայտում, թե բարի թագավորը բացառվում է, թագավորի գոյությունը ինքնին անարդար է. «Բանվոր ձեռքերն են, արյուն քրտինքով, պալատներ կերտել, իսկ անարև, խոր նկուղների մեջ իրանք մահացել»: Յուսուֆը, թագավոր դառնալով, մոռանում է անցյալը, տարվում պալատական կյանքով, իսկ ժողովուրդը գիտակցում է, որ «թագավորի փոխվելը քյասիբ խալիսի համար ի՞նչ է»: Դրամայի հերոսները ճշմարտանման են. շահը՝ դաժան, անհոգի, ոճրագործ, Յուսուֆը՝ հակասական, անվճռական, Խոջա Մուրաբեքը՝ քրծնող, նաև վրեժխնդիր, Սելմա Խաթունը՝ վեհանձն, բայց նաև դժբախտ ու թույլ, և վերջապես, Կուլարը՝ հավատարիմ իրեն ու ժողովրդին: Եվ նրանք բոլորն էլ իրենց կերտվածքով հաջողությամբ վերստեղծում են պարկակական իրականութունն իր դաժան ու արյունոտ դեմքով: Մ. Զանանը շոշափում է քաղաքական հարցեր, արձագանքելով արեւելյան ժողովուրդների ազատագրական շարժումներին:

Л. С. АРЗУМАНЯН — Из истории художественного воплощения темы Востока. — В 20—30-е годы в период формирования советской армянской литературы в сфере ее внимания входит, в частности, тема Востока. Обращаясь к этой теме, армянские писатели стремятся противопоставить старый и новый Восток с тем, чтобы ярче показать рождение нового мира, запечатлеть большие исторические преобразования.